



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

26 մարտի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի

Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի

Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Տիգրան Օհանյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Տիգրան Օհանյանի դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2018 թվականի փետրվարի 28-ին: Դիմումում թերությունները վերացնելուց հետո դիմողը 2018 թվականի մարտի 6-ին կրկին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող ճանաչել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածը և համարել անվավեր»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. Աշոտ Գրիգորյանը դիմում է ներկայացրել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ Տիգրան Օհանյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին:

06.11.2015 թվականին դիմումն ընդունվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթ: 11.12.2015 թվականին դատարանի թիվ ԵԱՔԴ/0199/04/15 սնանկության գործով կայացված

որոշմամբ պարտապանի և նրա գույքի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Միաժամանակ, նույն օրը կայացված մեկ այլ որոշմամբ սնանկության գործի վարույթը կասեցվել է:

Կատարողական գործողությունների ընթացքում անհնարին է եղել պարզել պարտապան Տիգրան Օհանյանի գտնվելու վայրը, սակայն պարզվել է, որ պարտապանը հանդիսանում է Երևան քաղաքի Քեռու փողոցի թիվ 48 հասցեում գտնվող գույքի սեփականատերը:

Դատարանի թիվ ԵԱՔԴ/0199/04/15 սնանկության գործով 15.02.2016 թվականին կայացված որոշմամբ սնանկության գործի վարույթը վերսկսվել է, իսկ 10.03.2016 թվականին կայացված վճռով դիմումը բավարարվել է, և Տիգրան Օհանյանը ճանաչվել է սնանկ:

Դատարանի թիվ ԵԱՔԴ/0199/04/15 սնանկության գործով 10.03.2016 թվականին կայացված վճռի դեմ Տիգրան Օհանյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք, ինչի արդյունքում բեկանվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱՔԴ/0199/04/15 սնանկության գործով 10.03.2016 թվականին կայացված վճիռը և գործն ուղարկվել է նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

Նշված գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աշոտ Գրիգորյանը: ՀՀ վճռաբեկ դատարանը 27.12.2017 թվականին կայացրած որոշմամբ բեկանել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.02.2017 թվականի որոշումը և օրինական ուժ է տվել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱՔԴ/0199/04/15 սնանկության գործով 10.03.2016 թվականի վճռին:

3. Դիմողը, ներկայացնելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2017 թվականի փետրվարի 22-ի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, մատնանշում է, որ օրենսդիրը, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածում սահմանելով ծանուցման այլ կարգ, քան նախատեսված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ըստ էության սահմանել է պարտապանին ծանուցելու ավելի արդյունավետ միջոց:

Միաժամանակ, դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթով նախատեսված՝ ծանուցման ավելի արդյունավետ այդ կարգը դեռևս չի նշանակում, որ գործին մասնակցող անձն

իրազեկ է և տեղեկացված է իր դեմ ներկայացված սնանկության դիմումի և այդ դիմումի հիման վրա հարուցված սնանկության գործի մասին:

Ըստ դիմողի՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ օրենքի առջև բոլորի հավասարության համընդհանուր սկզբունքը և դրանից բխող՝ կողմերի մրցակցության և հավասարության սկզբունքների պահանջը կարող է ամբողջ ծավալով իրականացվել միայն այն դեպքում, երբ պարտապանին ընձեռված է սնանկության դիմումի և այդ դիմումի հիման վրա հարուցված սնանկության գործի մասին իրազեկ լինելու, դրա վերաբերյալ առարկելու և իր դիրքորոշումն արտահայտելու հնարավորություն: Դիմողը գտնում է, որ գործում բացակայում է որևէ վերաբերելի, թույլատրելի և արժանահավատ ապացույց այն մասին, որ պարտապանն իրազեկ է եղել գործի մասին:

Միաժամանակ, համարելով, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածը հակասում է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին, դիմումում որպես Սահմանադրության այն դրույթներ, որոնց հակասում են դիմողի նկատմամբ կիրառված իրավական ակտի դրույթները, նշվում են Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասը և 19-րդ հոդվածի 1-ին մասը:

4. Դեկլարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից՝ գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

դիմումի, դրան կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դիմողը բարձրացնում է վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափության հարց: Այսպես, դիմողը մատնանշում է, որ վիճարկվող դրույթը նախատեսում է ծանուցման ավելի արդյունավետ ընթացակարգ, սակայն, դրանով հանդերձ, գործում բացակայում է որևէ վերաբերելի, թույլատրելի և արժանահավատ ապացույց առ այն, որ պարտապանն իրազեկ է եղել գործի մասին: Ընդ որում, գործի շրջանակներում նման եզրահանգման է եկել նաև ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը: Վերջինս 2017 թվականի փետրվարի 22-ի որոշման մեջ արձանագրել է, որ՝ «...Դատարանի կողմից պահպանվել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածով սահմանված կարգը, ինչը հնարավորություն է տվել Դատարանին շարունակել գործի քննությունը, միևնույն

ժամանակ գործում բացակայում է որևէ վերաբերելի, թույլատրելի և արժանահավատ ապացույց այն մասին, որ պարտապանը իրազեկ է եղել սնանկության դիմումի և այդ դիմումի հիման վրա հարուցված սնանկության գործի մասին, հետևաբար Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ բողոքաբերը զրկված է եղել իր դեմ ներկայացված սնանկության դիմումի վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու և իր սնանկությունը վիճարկելու հնարավորությունից»:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2017 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ արձանագրել է, որ՝ «... Վերաքննիչ դատարանը թեև գտել է, որ Դատարանի կողմից պահպանվել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածով սահմանված կարգը, ինչը հնարավորություն է տվել Դատարանին շարունակել գործի քննությունը, սակայն միևնույն ժամանակ արձանագրել է, որ գործում բացակայում է որևէ վերաբերելի, թույլատրելի և արժանահավատ ապացույց այն մասին, որ պարտապանը իրազեկ է եղել սնանկության դիմումի և այդ դիմումի հիման վրա հարուցված սնանկության գործի մասին: ...

... Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանն Աշոտ Գրիգորյանի սնանկության վարույթի ընթացքում ձեռնարկել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված միջոցները պարտապանի ծանուցումն ապահովելու նպատակով, մասնավորապես՝ պարտապանին ծանուցել է «Երևանի Քեռու փողոցի թիվ 48 տուն» հասցեով, որպիսի հասցեն նշվել է նաև պարտապանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքում, իսկ նշված հասցեի անշարժ գույքը հանդիսացել է պարտապանի սեփականությունը:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի վճիռը, հաշվի չի առել, որ վերոնշյալ հոդվածով ծանուցման և պարտապանին սնանկ ճանաչելու ընթացակարգ սահմանելն օրենսդրի կողմից ինքնանպատակ չէ: Նշված հոդվածով սահմանված ընթացակարգի պահպանումը բավարար է Դատարանի գործողություններն օրինական համարելու համար, ուստի արձանագրելով Դատարանի կողմից նշված հոդվածով սահմանված ընթացակարգի պահպանված լինելը՝ Վերաքննիչ դատարանը չէր կարող բեկանել Դատարանի վճիռը... »:

Հարկ է նշել նաև, որ Վճռաբեկ դատարանը որպես վերը նշված իրավիճակների համար պարտապանի օրինական շահերի և իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիք

մատնանշել է «Սահմանկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դրույթները:

Վերոշարադրյալի լույսի ներքո Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի նկատմամբ առաջացած անբարենպաստ հետևանքներն իր նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետևաբար, խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկմամբ:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով: Հետևաբար, այս առումով առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Տիգրան Օհանյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

26 մարտի 2018 թվականի
ՍԴԴԿՈ/1-8